ԺԱՄԱՆԱԿԻ ՀՐԱՇՔԸ

THE MIRACLE OF THE MOMENT

ԳԱՂ. 4:4-6

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.

Գաղ. 4:4-6 - 4 Իսկ երբ ժամանակը իր լրումին հասավ, Աստուած ուղարկեց իր
Որդուն, որը ծնվեց կնոջից եւ մտավ օրէնքի տակ՝ 5 փրկելու համար նրանց, որ
օրէնքի տակ էին, որպէսզի մենք որդեգրություն ընդունենք։ 6 Եւ որովհետեւ դուք
որդիներ էք, Աստուած մեր սրտերի մէջ ուղարկեց իր Որդու Հոգին, որ աղաղակում
է՝ Աբբա, Հայր։

I. ՆԱ ԵԿԱՎ ՃԻՇՏ ԺԱՄԱՆԱԿԻՆ։
HE CAME AT THE RIGHT MOMENT.

Եփ. 1:9-10 - 9 Ճանաչեցրեց մեզ, ինչպէս հաճելի էր իրեն, իր կամքի
խորհուրդները. նա դրանք նախապէս սահմանած էր Նրանով, 10 որպէսզի,
ժամանակների լրումին, ինչ որ երկնքում է եւ ինչ որ երկրի վրա, ամէն ինչ
Քրիստոսով բովանդակուի։

Trust that God will put the right people in your life at the right time and for the right reason.

II. ՆԱ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ՃԻՇՏ ԺԱՄԱՆԱԿԻՆ։
HE PROVIDES AT THE RIGHT MOMENT.

Սաղ. 145:15 - 15 Ամենի աչքերը քեզ են սպասում, եւ դու տալիս ես նորանց
կերակուրը իրանց ժամանակին։

- **Ի՞նչպես է Աստված ապահովում մեր կարիքները։**

  2 Օր. 11:14 - 14 Այն ժամանակ ձեր երկրի անձրևը իր ժամանակին կտամ՝
  առաջին եւ վերջին անձրևը, եւ կժողովես քո ցորենը, քո գինին ու քո յուղը։

- **Նա ապահովում է ճիշտ ժամանակին։**

  Գաղ. 6:9 - 9 Եւ **չձանձրանաք** բարին գործելուց, որովհետեւ իր
  ժամանակին կինձենք՝ եթէ **չթուլանանք**։

- **Դժվար ժամանակները կարող են մեզ թուլություն և ձանձրություն պատճառել։**

Ժող. 3:1-8 - 1 Ամեն բանի ժամանակ կա. Եւ ժամանակ՝ երկնքի տակ բոլոր
ձեռնարկության։ 2 Ծնելու ժամանակ, եւ մեռնելու ժամանակ. Տնկելու
ժամանակ, եւ տնկածը պոկելու ժամանակ. 3 Սպանելու ժամանակ, եւ
բժշկելու ժամանակ. Քանդելու ժամանակ, եւ շինելու ժամանակ. 4 Լալու
ժամանակ, եւ ծիծաղելու ժամանակ. Սգալու ժամանակ, եւ պարելու
ժամանակ. 5 Քարեր դէն գցելու ժամանակ, եւ քարեր ժողովելու ժամանակ.
Գրկելու ժամանա, եւ գրկելուց հեռանալու ժամանակ. 6 Որոնելու
ժամանակ, եւ կորցնելու ժամանակ. Պահելու ժամանակ, եւ դէն գցելու
ժամանակ. 7 Պատառելու ժամանակ, եւ կարելու ժամանակ. լռելու
ժամանակ, եւ խօսելու ժամանակ. 8 Սիրելու ժամանակ, եւ ատելու
ժամանակ. Պատերազմի ժամանակ, եւ խաղաղութեան ժամանակ։

Every bad situation will have something positive, Even a stopped clock shows correct time twice a day.

Ժող. 3:11 - 11 Նա ամեն բան արել է վայելուչ իր ժամանակին, նաեւ
հավիտենականությունը դրել է մեր սրտում.

- **Աստված ստեղծել է մարդուն հավիտենության համար, ժամանակից դուրս։**

III. ՆԱ ԱՍՈՒՄ Է, ՈՐ ՀԵՆՑ ՀԻՄԱ Է ՃԻՇՏ ԺԱՄԱՆԱԿԸ։
HE SAYS NOW IS THE RIGHT MOMENT.

2 Կոր. 6:2 - 2 Որովհետեւ ասում է. Ընդունելի ժամանակում լսեցի քեզ, եւ
փրկութեան օրում օգնեցի քեզ. ահա հիմա է ընդունելի ժամանակը. ահա հիմա
է փրկութեան օր։

Ծնն. 18:14 - 14 Եհովայի համար դժուար բան կա՞յ արդեօք. այս ժամանակ
եկող տարին դարձեալ քեզ մօտ կգամ, եւ Սարրան մի որդի կունենայ։